## Արձանագրություն N 5

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ/2024/Հ-32 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք.Երևան

<< 25>> 06. 2024թ.ժամը 11:00

Օրակարգ `

ՀՀ ՆԳՆ կարիքների համար **ավտոմեքենաների** ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ/2024/Հ-32 ծածկագրով ընթացակարգի բացման նիստում արձանագրվեց՝

1. ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ/2024/Հ-32 ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետին էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

**Գնառաջարկ**

| Չափաբաժնի համար | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին |
| 1 | 1 | Գոհարիկ ՍՊԸ | 1316550000 | 1320550000 | 20 % | 1584660000 | 1097125000 | 20 % | 1316550000.00 |
| 1 | 2 | [illegible] ՍՊԸ | 1316550000 | 1316550000 | 0 % | 1316550000 | 1183834500 | 0 % | 1183834500.00 |

**2. Տեղեկություն ընթացակարգի ընթացքի մասին.**

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ/2024/Հ-32 ծածկագրով ընթացակարգին հայտեր նրկայացրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրվել են գնահատող հանձնաժողովի կողմից:

Առաջին տեղ զբաղեցրած մասնակից Գոհարիկ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում տեխնիկական բնութագիրը ներկայացված է միջակայքերով, որը հստակ չի բնութագրում առաջարկված 2 տարբեր ապրանքանիշի /SKYWORTH EV6 և NISSAN ARIYA/ ավտոմեքենաներից ոչ մեկը:

1. Մասնավորապես՝ մասնակցի կողմից ներկայացված ապրանքի նկարագրի «Տեխնիկական բնութագիր» բաժնում ավտոմեքենաների տեխնիկական չափորոշիչները ամբողջությամբ նշվել են պատվիրատուի կողմից կազմված տեխնիկական բնութագրի ընդհանուր միջակայքերով, այլ ոչ թե կոնկրետ ներկայացված ավտոմեքենաների տվյալներով /օր. երկարություն՝ 4400-4800մմ, լայնություն՝ 1800-2100մմ, բարձրություն՝ 1600-1800մմ, անվային բազա՝ 2700-2800մմ, ճանապարհային լուսածերպ (կլիրենս)՝ 170-180մմ, վազքը մեկ լիցքավորմամբ (կմ)՝ ոչ պակաս 450 և այլն/: Անհրաժեշտ է ներկայացնել առաջարկված 2 ավտոմեքենաների /SKYWORTH EV6 և NISSAN ARIYA/ վերաբերյալ կոնկրետ չափորոշիչները՝ համաձայն տեխնիկակական բնութագրում առկա բոլոր տողերի /շարժիչ, չափսեր, մարտկոց, վազք, լիցքավորում, օպերացիոն համակարգ, քաշ, բեռնատարողություն և այլ/:
2. Համաձայն տեխնիկական բնութագրի, մատակարարը պետք է ունենա ավտոպահեստամասերի (ընթացային, թափքի մասի պահեստամասեր) պահեստ կամ խանութ, վերանորոգման համար անհրաժեշտ բոլոր արտադրամասերը (մարտկոցների, ընթացամասի, էլեկտրականության, անվաբացքի կարգավորման, վուլկանացման, ղեկային մասի, փոխանցման տուփի, մեքենայի ախտորոշման և այլ անհրաժեշտ սարքավորումներ և ծառայություններ, ինչպես նաև զոդման և թափքի ներկման աշխատանքներ իրականացնելու հնարավորություն): Մասնակցի կողմից ներկայացվել է գործակալական պայմանագիր՝ կնքված «Գոհարիկ» ՍՊԸ-ի և «Հրաչ 1988» ՍՊԸ-ի միջև: Անհրաժեշտ է ներկայացնել ավտոպահեստամասերի խանութի /կամ պահեստի/, ինչպես նաև վերանորոգման և սպասարկման ծառայությունների իրականացման վայրի և նշված բոլոր ծառայությունների կատարումը նույն վայրում ապահովելու հնարավորությունների առկայության վերաբերյալ տեղեկատվություն:

**Գնահատող հանձնաժողովի որոշմամբ** ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ/2024/Հ-32 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման նիստը կասեցվում է 1 աշխատանքային օրով և Գոհարիկ ՍՊԸ-ին առաջարկվում է 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

**Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման կարգի 67-րդ կետի գնահատող հանձնաժողովի կողմից հարցում կկատարվի ՀՀ Ֆինանսների նախարարություն:**

**Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 27.06.2024թ.-ին ժամը 11:00-ին:**

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0 :

*Հանձնաժողովի նախագահ՝* Վ. Ավագյան

Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Աբազյան

Գ. Գասպարյան

Քարտուղար՝ Հ. Ասատրյան